ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/11 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ ՊԵԿ 2023 թվականի կարիքների համար լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 05.12.2022թ. N 650/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.12.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Ավետիսյանը, Զ.Աղաջանյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/11 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Գալստյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/11 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն (ք. Երևան, Ազատության-24/1)
2" «Յուքոմ» ՓԲԸ-ն (ք. Երևան, Դավիթ Անհաղթի-8/4)
3"«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն (ք. Աբովյան, Խաղաղության-1)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Չ/Հ	Մասնակիցների անվանումները	Ծառայության անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			պլանավորվա ընդհանուր գին ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ (ՀՀ ՊԵԿ տվյալների փոխանցման տեղեկատական ցանցի սպասարկման ծառայություններ)	71 520 000	20%	85 824 000	85 824 000
2		«Յուքոմ» ՓԲԸ		72 500 000	20%	87 000 000	
3		.«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ		125 000 000	20%	150 000 000	

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Առաջին տեղը զբաղեցրած «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
3. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մյուս մասնակիցների հայտերը մերժել:
4. ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/11 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյան

Անդամներ՝ Ա.Ավետիսյան

Զ.Աղաջանյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան